

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԱԾԱԿԱՆ  
ԲԱՆԱԶԵԿԵՐԻ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ՝

ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ

Ուրարտական արձանագրությունների և դրանց առանձին հատվածների սկզբում սովորաբար տրվում են կաղապարային հետևյալ միատիպ բանաձևերը.

1. <sup>D</sup>Haldini kuruni <sup>D</sup>Haldini <sup>Giš</sup>surii(i) kuruni(e)...
2. <sup>D</sup>Haldinini usmasini/alsuisini/bausini (այսինչը) alie...
3. <sup>D</sup>Haldini uštabi masinie <sup>Giš</sup>sure...

Սրանք ուրարտագետները թարգմանում են հետևյալ կերպ.

1. Խալգը հզոր է, Խալդի գեները (սուրը)(ավելի) հզոր է.
2. Խալդի հզորությունը/մեծությունը/հրամանով (այսինչը) ասում է.
3. Խալգը ելավ (արշավանքի) իր գեներով (սրով)<sup>1</sup>:

Երկար տարիներ նվիրելով ուրարտական արձանագրությունների լեզվի ուսումնասիրությանը մենք եկել ենք այն եզրակացությանը, որ հիշյալ բանաձևերի բառապաշարն ու քերականական կառուցվածքը հնարավոր է մեկնել հայերենով, այսինքն՝ այդ բանաձևերը համարել հայոց լեզվի առաջին գրավոր տեքստերը:

Հայերեն բառերի և բառաձևերի սեպագրային արտահայտությունը, իհարկե, ունեցել է իր առանձնահատկությունները: Մասնավորապես, հավանական է բառավերջի թուլացած ձայնավորների հաճախակի արտահայտությունը 1-ով կամ 2-ով, 1Ձ երկբարբառինը 1-ով և այլն<sup>2</sup>:

Առաջին բանաձևի kuruni և suri բառերը հետագա կուռն (սեռ. կռան, հոգն. ուղղ. կռունք) և սուր (սեռ. սրոյ) բառերի սկզբնաձևերն են՝ հավանաբար ըստ այն վիճակի, երբ շեշտը վերջրնթեր էր, և արդեն առկա էր վերջավանկային անշեշտ ձայնավորների որոշ թուլացում. այս հանգամանքը բազմիցս նշված է հայերենի համեմատական ուսումնասիրություններում<sup>3</sup>: Այսպիսով, կուռն բառի վերականգնված ձևը պետք է լիներ

\* Այս հոդվածի սկզբնական ոտևերեն տեքստը գրվել է ավելի քան 7-8 տարի առաջ, բայց հեղինակի հիվանդության պատճառով ժամանակին չի հրատարակվել: Մտադրություն է եղել նաև այն թարգմանաբար ներկայացնել արտասահմանյան հեղինակավոր լեզվաբանական հանդեսներից մեկին: Ներկա հայերեն տարբերակը քիչ է գանազանվում ոտևերեն տարբերակից:

1 Հմմտ. օրինակ, Г. А. М е л и к и ш в и л и. Урартские клинообразные надписи. М., 1966, с. 94—95.

2 Հմմտ. М. Л. Х а ч и к я н. Хурритский и урартский языки. Ереван, 1985, с. 30.

3 Տե՛ս, օրինակ, А. М e i l l e t. Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique. Vienne, 1936, p. 19. Ըստ մեր «Հին հայերենի հոլովման սխտեմը և նրա ծագումը» աշխատության (Երևան, 1959) այս երևույթը ունեցել է հատուկ ձևաբանական պայմանավորվածություն շեշտվել են հատկապես հիմքերը, և անշեշտ են եղել հատկապես վերջավորությունները:

\*Կո՛ւռուՆ (Համտ. հոգն. ուղղ. կռուՆք, որտեղ ու-ն շեշտի տակ պահպանվել է), իսկ սուր բառինը՝ սո՛ւրո (Համտ. վրաց. ყვინო «գինի», որ, ամենայն հավանականությամբ, փոխառված է հայերենից նախքան ուղղականի — Ո վերջավորության անկումը): Այս երկու ձևերը հիշյալ բանաձևում արտահայտված են kuruni և suri գրություններով:

Եթե նկատի ունենանք, որ հայերենի ի նախգիրը կարող էր սեպագրության մեջ անջատ չարտահայտվել, ապա վերևում բերված առաջին բանաձևը գրաբարում կունենար հետևյալ տեսքը (D և GIS գետերմինատիվները բաց ենք թողնում).

խալղիՆ (կամ խալղեան) կուռն խալղիՆ (կամ խալղեան) սուր ի կուռն:

Հարկ ենք համարում նշել, որ և՛ կուռն, և՛ սուր բառերը բնիկ հայերեն են՝ Հնդեվրոպական բավականին վստահելի դուգահեռներով<sup>4</sup>: Այդ երկու բառերի ուրարտական արձանագրություններում ունեցած տարբեր գործածությունները շատ լավ համընկնում են հայերեն բառերի իմաստային տարբեր գրսևորումների հետ:

Երկրորդ բանաձևի տարբերակներում իրար փոխարինող usmasini, alsuisini և bausini բառաձևերը, որոնք ուրարտագիտական աշխատություններում մեկնաբանվում են որպես usmase «հզորություն», alsu(i)se «մեծություն» և bause «խոսք, հրաման» բառերի գործիական հոլովաձևերը, իրականում կարող են դիտվել որպես հին հայերենի —Մ հոլովման անունների բացառականի ձևեր. եթե, մանավանդ, ընդունենք այն հավանական գրույթը, որ ի նախգիրը այդ ժամանակ գեռ չէր գարձել բացառականի անբաժան մասը: Այդ բառերը առանց —ո-ի հաղվագեպ են գործածվում, և կարելի է ասել, որ այստեղ առկա են ԱՄԾՄ տիպի բառերի բացառականի (յ)ԱՄԾՄԷ տիպի ձևեր, որոնց համար վերականգնելի են \* (յ)ԱՄԾիՄԷ տիպի սկզբնաձևեր (այդ շրջանում առանց նախդրի): Այսպիսով, usmasini, alsu(i)sini, bausini ձևերը կարող են լինել բացառական սկզբնաձևերի կանոնական սեպագրային արտացոլումները: Եթե նկատի առնենք, որ հին հայերենի —Մ-ով շատ հիմքեր ծագում են ոչ —Մ-ով հիմքերից, և որ հին հայերենում —Մ հոլովմամբ հոլովվում են նաև ոչ —Մ-ով վերջացող հիմքեր, ապա կարելի է ասել, որ քննարկվող բանաձևերի մեջ արտացոլված է հետագա —ով հիմքերի կազմավորման ընթացքը:

Ինչ վերաբերում է բերված հիմքերին, ապա կարելի է հավաստել դրանց Հնդեվրոպական ծագման, այսինքն՝ բնիկ հայերեն լինելու հնարավորությունը:

Ուրարտա-Հնդեվրոպական դուգահեռներին նվիրված աշխատություններում (նաև մեր գործերում), նշված է ուրարտական bause-ի և հայ. բայ, բան, բառ բառերի ծագումնային ակնհայտ ընդհանրությունը. հայերեն բառերը ծագում են Հնդեվրոպական \*bha- «խոսել» արմատից և bause/bausini ձևերի համար կարելի է ենթադրել նաև բալսն (bausin)

4 J. Pokorny. Indogermanisches etymologisches Wörterbuch. I. Bern und München, 1959, S. 397-398, 542; Գ. Զ ա հ ու կ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1987, էջ 126, 131:

«բան, խոսք, հրաման» տիպի սկզբնաձև: Այս վերականգնումը կատարելուց հետո նկատեցինք, որ սրա հետ համընկնում է զբալս (զբօս) արմատը, որի նախնական -ն-ով հիմքի օգտին են խոսում զբալսնուլ, զբալսա-նիլ ձևերը: Այս արմատի սկզբնական իմաստը պետք է համարել «խոսք, խոսակցություն», որից ծագել է «զրուցել, զրույց անել, խոսակցություն» (զրույցով) ժամանակ անցկացնել» իմաստը. սա առկա է զբալսանը բառի որոշ վաղ գործածություններում: Ահա թե ինչ է ասված Փիլոնի «Լինելութիւն խնդրոց և լուծմանց» աշխատության մեջ. «Զերկայն խալսս և զճառսն սովորեցանք կոչել զբալսանս»: Ամենայն հավանականությամբ, այս իմաստի ընդլայնմամբ են ծագել «մի բանով ժամանակ անցկացնել», «միտքը մի բանի տալ», «զբաղվել», «զվարճանալ» իմաստները:

Զբալս-ը ակնհայտորեն կազմված է զ նախգիր-նախածանցով, և բուն բալս-ը թերևս պետք է ծագեր փա- «խոսել» արմատից հնդեվրոպական -ս ածականի -ek/k-ածանցի բաղադրումով. փա-uk-ի մեջ uk>us փոփոխությունը հայերենի առանձնահատկությունն է և հանգես է գալիս նաև ուս-անիմ բայի մեջ (euk/uk- հնդեվրոպական արմատից): Եթե բալս-ը նշանակում է «խոսք, զրույց», ապա զբալս-ը զ սաստկական նախգիր-նախածանցով պետք է նշանակեր «չատ զրույց, շատ խոսք», որ լիովին համապատասխանում է զբալս-ի իմաստի հին մեկնություններին:

Հայկական բնույթի առումով շատ տիպական է usmase (-sini) «զորություն, ուժ, հզորություն» բառը: Ինչպես հայտնի է, իր գրավոր շրջանում հայերենը այդ գաղափարներն արտահայտել է փոխառյալ իրանական հիմքերով՝ ոյժ, զալրութիւն, հզալրութիւն: Բնական է ենթադրել, որ ուրարտական շրջանում այն պետք է ունենար հավանաբար բնիկ հայերեն բառեր: Սրանցից մեկը կարող էր լինել փոխառյալ ոյժ բառի հիմքում ընկած հնդեվրոպական aug-/ug- «աճեցնել, մեծացնել, բազմացնել» արմատից ծագող և ուրարտական արձանագրություններում usmase (-sini) ձևով արտացոլված բառը. հնդեվրոպական ug-mo- կամ ug-mo- նախածանցի դիմաց հայերենը պետք է ունենար \*uc-mo- > \*us-mo- կամ \*uc-man- > \*us-man- տիպի ձևերի հիման վրա կազմված \*usmas/-in տիպի մի ձև, որ, ինչպես տեսնում ենք, բավական հարազատորեն արտացոլված է ուրարտական արձանագրություններում: Հմմտ. հ. հնդկ. ojman «ուժ», լատ. augmen(tum), լիտվ. augumas «աճ, աճում»<sup>5</sup>:

Լիովին հնարավոր է նաև alsu(i)se (-sini) բառի բնիկ հայերեն լինելը: Այն կարող էր ծագել հնդեվրոպական al- «աճել, աճեցնել, սնել» արմատից՝ sko-ածանցով, կամ, թերևս, այդ արմատի -t- ածականի քմայնացմամբ ծագած ձևից altiō->հայ. alco- (ուրարտ. alsu- գրություն), Հմմտ. լատ. altus «բարձր»: Այսպիսով, alsu(i)se (-sini) բառը պետք է նշանակեր ավելի շուտ «բարձրություն», քան «մեծություն»:

Երրորդ բանաձևում suri «սուր» բառը հանդիպում է sure ձևով, որ ուրարտագեաները մեկնում են որպես տրական հոլովաձև: Սակայն տվյալ տեքստաշարում այդ մեկնությունն իրեն չի արդարացնում: Ավելի ճիշտ կլիներ -e-ն դիտել որպես թուլացած ձայնավորի նույնպիսի նշանակում,

<sup>5</sup> Փիլոնի Երբայեցոց Մնացորդք ի Հայս. հ. Բ, Վենետիկ, 1826:

<sup>6</sup> Հիշյալ ածանցներից զուրկ ձևից է ծագում իրան. օշ>հայ. ոյժ բառը:

ինչպիսին *-i-*ն է: Բանաձևի բառերից *uṣtabi-*ն պետք է ներկայացնեն հայերենի *-ԱՄ-*ով անցյալ կատարյալի նախնական նշանակումը: Մեր ուրարտագիտական աշխատություններում *uṣta-*ն համեմատվել է Հնդեվրոպական *stā-* «կանգնել, կանգնեցնել, դնել» արմատի հետ: Սակայն հայերենում այդ արմատը սլազպանվել է միայն ածանցական ձևով և իմաստային յուրահատուկ անցմամբ՝ *\*stā-nā-im* > *ստանամ*, այս ձևն էլ անցյալ կատարյալում ներկայացված է միայն ցոյական հիմքով (*-ց-* տարրով)՝ *ստացալ*, ինչպես *ԱՄ* խոնարհման բոլոր բայերը: Եթե *uṣtabi-*ն ներկայացնում է հայկական ծագման որևէ բայի արտացոլում, ապա այն կարող էր լինել *ոստնում* «ցատկել, վեր թռչել, գուրս թռչել, հեռանալ» բայի անցյալ կատարյալի *ոստնալ* ձևի նշանակումը: Այս բառը առանձին համատեքստերում ունի հատկապես «ելնել, դուրս գալ, արագ գուրս գալ, հեռանալ» իմաստը և նոր հայկազյան բառարանում բացատրված է նաև «ի բաց հեռանալ»: Հմմտ. «Ոստեար ի բաց ի դրկացն հայրենեաց», «Ի կոոցն ի բաց ոստուցեալք դարձան և պաշաէին զաստուած», «Մ կարէ լսել դմա... կամեցաւ ի բաց ոստնուլ», «Յորժամ այս տեսիլ իրաց աստուածայնոց ածցէ ոք զքեզ... ի բաց ոստնուլ»:

Երրորդ բանաձևի *masinie-*ն Գ. Մելիքիչվիլին դիտում է որպես *masi* «իր, իր սեփական» դերանվան *ni(e)-*ով ձև: Սակայն ուրիշ ուրարտագետներ տալիս են միանդամայն այլ մեկնություններ:

Յ. Ֆրիդրիխը որևէ հիմք չի տեսնում *masini(e)-*ն դերանուն համարելու *masi* և *masini* ձևերի նմանությունը դիտելով պատահական: Մ. Մերեթելին այն համարում է գոյական և թարգմանում «հզորություն»: Ի. Ի. Մեչչանինովը գտնում է, որ այդ բառի իմաստը շարունակում է մութ մնալ, մանավանդ որ այն հանդիպում է նաև *masinili* ձևով անթարգմանելի մի տեքստում:

Մենք հակված ենք *masini-*ն թարգմանելու «հզոր» և հայերենի միջոցով կապելու Հնդեվրոպական *magh-ti-* «հզորություն» ձևի հետ (*magh-* «կարողանալ, գորել, ի վիճակի լինել, օգնել» արմատից): Հնդեվրոպական *\*magh-ti-no-* > *mac<sup>o</sup>ino-* (ուրարտ. ձևով *masini*) անցման համար հմմտ.

*\*pok<sup>u</sup>-ti-* > *հաց*, թեև հնարավոր էր նաև *\*magh-tio-* տիպի նախաձև: Ուրարտերենում ավանդված *masini* ձևը ստուգաբանորեն լիովին համարժեք է ռուս. *МОЩНЫЙ* ձևին: Այս նույն արմատից է համարվում *\*thro-* ածանցով կազմված հայ. *մարթանք* «հնարք» (*\*magh-thro-* + *-անք*) բառը:

Ուրարտական կոչված արձանագրությունները ներածական բանաձևերի վերևում տրված վերլուծության հիման վրա կարելի է հանգել հետևյալ էական եզրակացություններին.

1. Բավական համոզությունամբ ապացուցվում է այդ բանաձևերի հայկական բնույթը. դրանց բառապաշարը հիմնականում հայկական է, քերականական առանձնահատկությունները հնարավոր է բացատրել նախաբարբարյան շրջանի քերականական առանձնահատկություններով:

2. Այդ բանաձևերը հնարավորություն են տալիս կատարելու հայերենի նախադրաբարբարյան շրջանի բառային վերականգնումներ<sup>7</sup>, պարզելու

7 И. И. Мещанинов. Аннотированный словарь урартского (биайнского) языка. Л., 1978, с. 204.

8 Առաջիմ ձևնպահ ենք մնում որոշ համարձակ վերականգնումներից և համեմատություններից. այսպես, օրինակ, կարելի է ենթադրել, որ *Haldi* դիցանունը *Պիժ* բառի հիմքի *Պի-*ով նույնպիսի կազմություն է, ինչ *Arsibedini* դիցանունը (*Arsibi* > *հետագա*

Հետագա փոխառությունների (մանավանդ իրանական ծագման բառերի) բուն Հայկական Համարժեքները՝ Հնդեվրոպական նախաձևերի և ուրարտական կոչված արձանագրությունների ձևերի Համեմատության հիման վրա:

3. Մեր կողմից տրված մեկնաբանության խոցելի կողմն այն է, որ առայժմ բաց է մնում այդ բանաձևերի և «ուրարտական» կոչված տեքստերի լեզվական բուն առնչությունը: Հայտնի է, որ մեր նշած բանաձևերում առկա բառերը հանդիպում են նաև այլ արձանագրություններում, և Համապատասխան Համատեքստերի (տեքստաշարերի) ստուգումը և սրանց լեզվի ու քննված բառաձևերի լեզվի Համակողմանի Համեմատությունը խիստ անհրաժեշտ է: Ճիշտ է, որոշ բառերի՝ մեր կողմից նշված իմաստները առանձին դեպքերում կարծեք թե ավելի լավ են մեկնաբանվում (Հմմտ. *kuruni*), բայց դրանց Հետագա մանրագնին մեկնաբանությունը մնում է ուրարտագետների և Հայագետների կարևոր խնդիրը:

4. Ուրարտագետների ընդհանուր ջանքերով առանձնացվել է սեպագրական նշանների ընթերցանության տարբերակներից մի որոշակի ստանդարտ, որ կիրառվում է եղած տեքստերի նկատմամբ: Այդ տարբերակների Հետագա քննությունը, Համեմատությունն ու վերականգնված ստանդարտի ճշգրտումը, այլև սրա Հետ կապված սեպագիր տեքստերի արտալեզվական ուղղվածության հմուտ վերլուծությունը կարող են շատ բան տալ և նույնիսկ Հեղաշրջող նշանակություն ունենալ:

## О ВОЗМОЖНОМ АРМЯНСКОМ ХАРАКТЕРЕ ВВОДНЫХ ФОРМУЛ УРАРТСКИХ НАДПИСЕЙ

ГЕВОРГ ДЖАУКЯН

### Р е з ю м е

Многие урартские надписи и отдельные их части начинаются трафаретными формулами следующих типов:

1. <sup>D</sup>Haldini kuruni <sup>D</sup>Haldini <sup>G</sup>ššuri(i) kuruni(e)...
2. <sup>U</sup>Haldinini ušmašini/alsušini/baušini...
3. <sup>D</sup>Haldini ustabi masinie <sup>G</sup>ššure...

Эти формулы обычно переводятся следующим образом:

1. Бог Халд могуч, оружие (меч) бога Халда могучее...
2. Могуществом/величием/по велению бога Халда...
3. Бог Халд выступил со своим оружием (мечом)...

Долгие годы работая над урартскими надписями, мы пришли к заключению, что лексика и строй этих формул имеют армянский характер, и их можно считать первыми письменными текстами армянского языка. Хотя отдельные слова не сохранились, их нетрудно восстановить на основе индоевро-

---

արժուի, և դի, ինչպես այն մեկնաբանված է մեր «Հայկական շերտը ուրարտական դիցարանում» Հոդվածում): Այս դեպքում Hal- բաղադրիչը կարելի էր նույնացնել Հայ. հաղ «անգամ» սկզբնապես բաղաձայնահիմք բառի Հետ, որ իրանական ժամանակ բառի փոխառությունից առաջ կարող էր լինել այդ գաղափարի բնիկ Հայկական նշանակումը (Հմմտ. անգլ. time «ժամանակ» և «անգամ»): Այլ կերպ ասած՝ Haldi-ի բուն Հայկական Չաղդի ձևը այս մեկնաբանությամբ պիտի նշանակեր «ժամանակի աստված»:

пейских праформ: *usma-* (в *ušmase*) <и.-е. *ug-mo-* или, может быть, *\*ug-mn-* (ср. др.-инд. *oḡmán-* – “сила”, лит. *augimas, áugumas* “рост”), *\*alc<sup>o</sup>* (в *alsuisini*) <и.-е. *\*al-sko-* или, вероятнее, *\*altio-* (ср. лат. *altus*, ср. степень *altius*), *\*mac<sup>ino-</sup>* (в *masinie*) <и.-е. *\*magh-ti-no-* (ср. др.-инд. *maghá-* – “могущество, богатство, дар”, гот. *mahts* “мощь, сила, могущество”). Ниже приводятся эти формулы в древнеармянской передаче и в переводе (детерминативы и идеограммы опускаются):

1. Xaldean kurn, xaldean sur i kurn...  
Халдова рука, халдов меч в руке...
2. Xaldeann usmasnē / alc<sup>o</sup>usnē / bausnē...  
От халдовой силы/высочества/слова...
3. Xaldn osteaw i mac<sup>ino</sup>in sur...  
Халд вышел могучим мечом...

## ON POSSIBLE ARMENIAN NATURE OF INTRODUCTORY FORMULAS IN URARTIAN INSCRIPTIONS

GEVORG DJAHUKYAN

### S u m m a r y

Many Urartian inscriptions and their separate parts begin with stereotyped formulas of the following types:

1. *\*Haldini kuruni* *\*Haldini GISsuri(i) kuruni(e)*...
2. *\*Haldmini ušmašini/alsuisimi/bausini*...
3. *\*Haldini ustabi masinie GISsure*...

These formulas are usually translated as follows:

1. God Haldi is powerful, God Haldi's weapon (sword) is more powerful...
2. By the power /the sublimity/the order of God Haldi.
3. God Haldi took the field with his weapon (sword)...

For many years having worked at Urartian inscriptions we have come to the conclusion that the vocabulary and the structure of these formulas have Armenian nature and they may in fact be regarded as the first written texts in the Armenian language. Though separate words have not been preserved it is not difficult to reconstruct them on the basis of Indo-European preforms: *\*usma-* (in *ušmase*) <IE. *\*ug-mo-* or, perhaps, *\*ug-mn-* (cf. Old Ind. *oḡmán-* – “strength”, лит. *augimas, augumas* “growth”), *\*alc<sup>o</sup>* (in *alsuisini*) <IE. *\*al-sko-* or, probably, *\*altio-* (cf. Lat. *altus*, comp. degree *altius*), *\*mac<sup>ino-</sup>* (in *masinie*) <IE. *\*magh-ti-no-* (cf. Old Ind. *magha-* – “might, wealth, gift”, Goth. *mahts* “strength, might”). These formulas are presented in Old Armenian transcription and English translation (the determinatives and ideograms are omitted) below.

1. Xaldean kurn, xaldean sur i kurn...  
Hand of Haldi, the sword of Haldi in hand...
2. Xaldeann usmasnē / alc<sup>o</sup>usne / bausne...  
From the strength /the majesty/the word of Haldi...
3. Xaldn osteaw i mac<sup>ino</sup>in sur...  
Haldi went with a powerful sword...